# Ալեքսանդր Մանասյան. «Խուճապի պատճառ չկա, բայց հանգստանալու առիթն էլ է բացակայում»

*Քաղաքագետը մեկնաբանում է մադրիդյան սկզբունքներն ու բանակցությունները*

Մադրիդյան սկզբունքները ներկայացնող փաստաթղթում քաղաքագետ **Ալեքսանդր Մանասյանը** ձեռքբերում է համարում ոչ թե շարադրված 6 կետերը, այլ այն, ինչը գրված չէ: «Տարածքային ամբողջականության խնդիրը փաստաթղթում նշված չէ եւ չի ընդունվում որպես մեկնակետ: Սա ձեռքբերում է», «Արմաս» ակումբում երեկ ասաց «Քաղաքական հետազոտությունների ակադեմիա» ՀԿ նախագահ Ալեքսանդր Մանասյանը: Ուսումնասիրելով հրապարակված փաստաթուղթը՝ քաղաքագետը եզրակացնում է, որ խուճապի պատճառ չկա, բայց եւ հանգստանալու առիթն էլ է բացակայում: «Սա սկզբունքների փաթեթ է, եւ պետական պայմանավորվածությունների հարց է, թե ինչ հերթականությամբ կներկայացվի: Միակ կետը, որ տարբեր մեկնաբանությունների չի ենթարկվում, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի սահմանումն է, ինչն էլ պետք է որոշվի հանրաքվեի միջոցով», ասաց Ալեքսանդր Մանասյանը:

Լեռնային Ղարաբաղի խնդրի հանգուցալուծումը, քաղաքագետի դիտարկմամբ, մոտ ապագայում չի լինի: «Բանակցությունների այս փուլին եւ այս սկզբունքներին հասնելու համար պահանջվեց 20 տարի: Երկար տարիներ են անհրաժեշտ



վերջնական լուծման հասնելու համար», նկատում է Ալեքսանդր Մանասյանը:

Որ Լեռնային Ղարաբաղը որպես ինքնորոշման սուբյեկտ կայացել է դեռ 20-րդ դարի սկզբին, Ալեքսանդր Մանասյանն ապացուցում է՝ հիմք ընդունելով Կավբյուրոյի որոշումները: «Նաեւ ԽՍՀՄ օրենսդրությունը սահմանում է, որ Խորհրդային Միության կազմից անդամ հանրապետության դուրս գալու պարագայում ինքնավարություններն իրավունք ունեն որոշելու իրենց կարգավիճակը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձեւավորվել է՝ հիմք ունենալով օրենսդրությունը», ասաց Ալեքսանդր Մանասյանը:

Մադրիդյան սկզբունքները ներկայացնող փաստաթղթում նշված Լեռնային Ղարաբաղ տերմինը աշխարհագրական տարածք է ենթադրում: Քաղաքագետը նշում է, որ Քարվաճառը, Լաչինը եւ Ղուբաթլուն միանշանակ ներառված են Լեռնային Ղարաբաղի տարածքում: Մեկնաբանելով հարակից շրջանների վերադարձի կետը՝ Ալեքսանդր Մանասյանը նկատում է, որ ազատագրական պայքարի տարիներին Լեռնային Ղարաբաղի աշխարհագրական տարածքից հայ զինվորները դուրս չեն եկել, հետեւաբար հարակից շրջաններ կարող են համարվել միայն Դաշտային Ղարաբաղի տարածքները: Բանակցությունների կարեւորագույն հարցը, քաղաքագետի կարծիքով պետք է տարածքները լինեն: «Տարածքն ամենաբարձր արժեքն է: Անվտանգության երաշխիքը հենց տարածքն է», ասաց քաղաքագետը: Հայկական կողմի ամենակարեւոր խաղաթուղթը բանակցությունների գործընթացում քաղաքագետը համարում է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղն անկախ Ադրբեջանի մաս երբեք չի կազմել եւ 1991 թվականին իր անկախությունը հռչակել է Ադրբեջանին չպատկանող տարածքներում:

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Դատը հետաձգվեց... ՊՈԱԿ-ը լուծարվում է

2009-ի մարտին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

Վարչական դատարանը մասամբ է վարույթ ընդունել ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը:

ԻԱԿ-ը բողոքարկել էր դատարանի որոշումը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնն» ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործի քննությունը երեկ Վարչական դատարանում հետաձգվեց անորոշ ժամանակով:

Պատճառն այն է, որ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը լուծարվում է, եւ մինչեւ իրավահաջորդության հարցը չլուծվի, գործի հետագա քննությունն անհնար է:

Հիշեցնենք, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» դիմել էր դատարան՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ից տեղեկատվություն տրամադրելու մերժում ստանալու պատճառով:

ԻԱԿ-ը փորձել էր տեղեկություն ստանալ, թե «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008 թթ. որքան գումար է կազմել, ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008 թթ. ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագիր, ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008 թթ. որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

**Ն. Ս.**



# Ջորի Բալայանի գաղափարը, երազանքը, նախագիծը

**Անցյալ գիշեր ես ուղարկեցի Ջորի Բալայանի հերթական ռեպորտաժը «Անձնակազմ» վերնագրով: Երբ ես տպվածքը նրան տվեցի ուղղումների համար, ասացի, որ մի տեսակ լավ չի ստացվում. ռեպորտաժը կոչվում է «Անձնակազմ», բայց այնտեղ ոչինչ չկա արշավախմբի պետի մասին: Նա նշեց, որ մենք մեկ ամբողջություն ենք: Այդ ժամանակ ես արդեն նրանից գաղտնի որոշեցի պատմել ամենագլխավորի՝ շուրջերկրյա նավարկության գաղափարի եւ իրականացման մասին:**

**«Կիլիկիայով» նավարկելու դեռ առաջին փուլում Ջորի Բալայանը իմ ներկայությամբ զանգահարել է Ամերիկա՝ Հարութ Սասունյանին, պատմելով, որ հարկավոր է Քըրք Քըրքորյանին շահագրգռել հայ ժողովրդի պատմության մեջ առաջին շուրջերկրյա նավարկության անհրաժեշտության մեջ: Նա հանգամանորեն նկարագրում էր այն ամենը, ինչ հետո մենք տեսանք սեփական աչքերով: Նա ասում էր, որ ճանապարհորդությունը կանցնի սփյուռքի գաղթօջախներով եւ նվիրված կլինի օտար ափերում հայապահպանությանը նպաստած մայրերին:**



**«Կիլիկիայի» նավարկության առաջին փուլում՝ հոկտեմբերին Աթենքում մեզ այցելեց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Եվ առաջին անգամ Ջորի Բալայանը խոսք բացեց իր վաղեմի ծրագրերի մասին: Իսկ մեկ տարի անց Ջիբրալթարում, որտեղից պաշտպանության նախարարը մեզ ճանապարհում էր դեպի օվկիանոս, Բալայանը նրա առջեւ փռեց կիսագնդի քարտեզը եւ խնդրեց գծել հայկական շուրջերկրյա նավարկության ապագա երթուղին եւ ապա ստորագրել: Խնդրանքը կատարելուց հետո Սերժ Սարգսյանն ասաց. «Գիտեմ, թե սա ինչով կավարտվի»: Հինգ տարի առաջ նրա ասածը մարգարեական դարձավ:**

**Նավարկության վերջին փուլում Ջորի Բալայանը Լոնդոնում հանդիպեց հայտնի գործարար եւ բարեգործ Վաչե Մանուկյանի հետ: «Կիլիկիա» վերադարձավ երջանկությունից փայլելով: Հաջորդ օրն ասաց, որ շուրջերկրյա նավարկության հարցը փաստորեն լուծված է: Մի քանի օր անց Վաչե Մանուկյանը եւ Արմեն Սարգսյանը եկան «Կիլիկիա» եւ իրենց ստորագրությունները դրեցին հիշյալ քարտեզի վրա:**

**Վերջերս «Արմենիայից» ես էլեկտրոնային փոստով Ջորի Բալայանի հոդվածը ուղարկեցի «Լիտերատուրնայա գազետային»: Այնտեղից իմացա, որ նա դեռ 60-ականներին քիչ էր մնում շուրջերկրյա նավարկություն կատարեր այդ թերթի, օվկիանոսագիտության ինստիտուտի ականավոր շատ մարդկանց (Կոնստանտին Սիմոնով, Միխայիլ Շոլոխով, Կոռնեյ Չուկովսկի, Վիկտոր Համբարձումյան, Մարտիրոս Սարյան, բեւեռախույզ Պապանին, տիեզերագնաց Պոպովիչ եւ շատ ուրիշներ) հովանավորությամբ: Բայց այն ժամանակ նախագծի իրականացումը կախված էր բազմաթիվ պատահականություններից:**

**Ներկայիս գիտարշավի երթուղին, նավի ձեւավորումը, անվանումը, երկու նավեզրերին հավերժության նշան եւ հայկական խաչ, գիտարշավի անվանումը, մայրերին ձոնված լինելը եւ շատ ուրիշ բաներ Ջորի Բալայանի մտահղացումներն են: Առանց նրա անձնակազմ փաստորեն չէր լինի:**

**ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ**
**«Արմենիա» նավ, Ատլանտյան օվկիանոս**

***Հ. Գ. Սույն տեքստի առաքումից բառացիորեն մի քանի ժամ առաջ, ասես ինչ-որ բան զգալով, Ջորի Բալայանը ինձ հրավիրեց իր նավախցիկ եւ առաջարկեց բարձրաձայն կարդալ իր մեկնած գրքի 537-րդ էջում ընդգծված պարբերությունը. «Որդիներն ապագայում կիրագործեն մեծ երազանքը եւ «Արմենիայով» շուրջերկրյա նավարկություն կկատարեն Սփյուռքի երթուղիներով: Միանգամայն բնական է, որ «Կիլիկիայով» նավարկությունն ավարտելով՝ մենք արդեն մտածում ենք ապագայի մասին: Մենք նույնիսկ վստահ ենք, որ «Արմենիայի» ընդհանուր նավասենյակի ամենից տեսանելի տեղում կգրեն մեծն Բալզակի «Ազգի ապագան մայրերի ձեռքերում է» խոսքերը»:***

***Երբ կարդալն ավարտեցի, նա ասաց, որ Հայկ Բադալյանին արդեն կարգադրել է Բալզակի այդ բառերը մեծ տառերով չորս լեզվով գրված կախել ընդհանուր նավասենյակում:***

# «Հույս ունեմ, որ Անկարան հետամուտ կլինի խոստումին եւ չի բացի հայկական սահմանը»

*1-ին էջից*

Անգլիայում շփումներ ունեցող Ալիեւը ելույթ ունեցավ Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում: Ալիեւն ասաց, որ ջանում են բանակցությունների միջոցով լուծել Ղարաբաղի հարցը, սակայն ջանքերը 15 տարի շարունակ արդյունքի չեն հանգեցնում, ապա եւ ավելացրեց. «Ցավոք, ես օրակարգում եմ պահում մեր հողերը պատերազմի ճանապարհով ազատելու հարցը»: Ալիեւը բացատրեց, որ միջազգային նորմերն իրենց տալիս են երկրի տարածքային ամբողջականությունը պահպանելու իրավունք, սակայն իրենք, լինելով ո՛չ լիարժեք խաղաղության, ո՛չ էլ լիարժեք պատերազմի իրավիճակում, ստիպված հզոր բանակ են պահում: Հուսադրող համարելով բանակցությունների միջոցով Ղարաբաղի հարցը կարգավորելու ջանքերը, Ալիեւը նշեց, որ դրանք բավարար չեն խաղաղության հաստատման համար»:

Հաջորդ օրը Լոնդոնում Ալիեւը նոր հայտարարություն է արել, կապված հայ-թուրքական հարաբերությունների հետ: Թուրքական հանրային հեռուստատեսությունը հուլիսի 15-ին «Թուրքիան սահմանները չի բացի» վերնագրով անդրադարձավ նաեւ դրան եւ մասնաշեց. «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հույս հայտնեց, որ Անկարան կպատի իր խոստումը եւ նախքան Ղարաբաղի հարցի լուծումը չի բացի Հայաստանի հետ սահմանը: Անգլիայում իրականացրած հանդիպումների ընթացքում Իլհամ Ալիեւը նշեց, որ իրենք ձգտում են խաղաղ ճանապարհով վերականգնել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ Թուրքիան աջակցում է այս քաղաքականությանը: Իլհամ Ալիեւն ընդգծելով, որ իրենք չեն խառնվում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ծավալվող բանակցություններին, ավելացրեց. «Սակայն համոզված ենք, որ Անկարան հետամուտ կլինի իր խոստումին եւ մինչեւ Ղարաբաղի հարցի լուծումը չի բացի սահմանները Հայաստանի հետ»:

Այս կարգի հայտարարություններ Իլհամը միշտ արել է, ընդ որում առանց ձանձրանալու: Հետեւաբար նորություն չեն պատերազմը վերսկսելու պատրաստակամությամբ միջազգային ուժերին շանտաժի ենթարկելու նրա մտավարժանքներն ու Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին այս ուժերի ցուցաբերած նախանձելի հանդուրժողականությունը: Եթե դա չի ենթադրում ադրբեջանական ռազմատենչության խրախուսում, կնշանակի միջազգային ուժերը լուրջ չեն ընդունում Իլհամին, ըստ երեւույթին, համարելով վերջինի հոխորտանքները անհիմն ցանկատեսություն:

Սակայն անընդմեջ կրկնության պարագայում, այն էլ եվրոպական մայրաքաղաքներում, ցանկատեսությունը, անկախ սնանկությունից, քաղաքական դիրքորոշման երանգ է ստանում: Հատկապես այն դեպքում, երբ Իլհամը ստորագրել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ռազմական ուժի կիրառումը բացառող մոսկովյան հռչակագիրը: Ավելին, նրա ռազմատենչ հայտարարություններից երեք օր առաջ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մադրիդյան սկզբունքներով կարգավորելու կոչ են արել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին:

Այլ կերպ, Իլհամը ռազմատենչ հայտարարություններով ոչ միայն շանտաժի է ենթարկել միջազգային ուժերին եւ շրջանցել մոսկովյան հռչակագրով ստանձնած պարտավորությունները, այլեւ ցույց է տվել, որ ինքն անկաշկանդ կարող է հակադրվել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների կոչին: Ինչպիսին էլ լինի միջազգային ուժերի մոտեցումը նրա հայտարարություններին, երբ դրանք չեն արժանանում համարժեք արձագանքի, ակամա օրինականացվում են: Սակայն Իլհամի ռազմատենչ հայտարարությունների օրինականացման պարագայում խնդիրը սոսկ միջազգային ուժերի հանդուրժողականությունը չէ, այլ հայկական իշխանությունների քար լռությունը: Դա իբրեւ Հայաստանի թուլության նշան, կոգեւորի մարդասպան ստահակին ազգային հերոս հռչակող Ադրբեջանին: Այդ ընթացքում Իլհամի հոխորտանքները հանդուրժող միջազգային ուժերը միեւնույն հանդուրժողականությունը կպահանջեն հայկական կողմից, որպեսզի պահանջի կատարման դեպքում ընկալվի որպես հակամարտության թույլ օղակ եւ դառնա ճնշումների թիրախ:

Ակնհայտ է, որ միջազգային ուժերին հետաքրքրում է ոչ այնքան Ադրբեջանի պես պետության շանտաժը կամ ստանձնած պարտավորությունների խախտումը, որքան ճնշումների թիրախ դարձնելու նպատակով կողմերից մեկին թույլ օղակի վերածելը:

AZG NEW 4.QXD 7/15/2009 10:48 PM Page 1



# Իրավիճակ. օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոններ

## *Պաշտպանվա՞ծ են արդյոք հիվանդի իրավունքները*

**Երբեմն սովորական գիտակցությունից անցումը մեկ այլ՝ անհավասարակշիռ հարթություն, թվում է, ակնթարթի տեւողություն պիտի ունենա. ճակատագրական պահ, որ կփոխի կյանքիդ ողջ ընթացքը, կտեղափոխի սահմանից անդին եւ հասկանալի, ծանոթ աշխարհն այլեւս քեզ չի ընկալի ու չի ընդունի առաջվա պես, ու դու օտար, անցանկալի, մերժված կլինես: Մի ակնթարթ՝ սահմանային գիտակցությունից այն կողմ հայտնվելու եւ... ո՞վ կարող է չափել այս երկու աշխարհների միջեւ ընկած տարածությունը...**

**Ամենավառ երեւակայությունն իսկ մեր ներս մտած շինությունը հիվանդանոց համարել չէր կարող: Մանավանդ որեւէ ցուցանակ այս մասին չէր հուշում, միայն ուշադիր հայացքը հին ու նոր անձրեւաջրերից մգլահոտած պատերից մեկին փակցված աշակերտական տետրակի ծավալով մի գրությունից պիտի ենթադրեր, որ սա հիվանդանոց է: Դեռ հեռվից գյուղական լքվածի կիսավեր լռությամբ շենքը վանում էր ներկաթափ, հնամաշ դուռ-լուսամուտներով: Ներս մտնելիս ակամա դռան ծանր ճռռոց ես լսում, եթե անգամ իրականում չկա: Առաջինը անտերության հոտն է, որ փչում է դեմքիդ, պատերի մեջ սեւականորեն ներծծված անձրեւաջրերը եւ բարձիթողիությունը այստեղ անտես բնակչի մի ներկայություն են ապահովել՝ անշնչելի այս տարածքի տեր ու տիրական նամշահոտ՝ սրտխառնոց ու գլխապտույտ առաջացնող, որ դուրս գալուց հետո էլ «մաշկիդ տակ» երկար ու սուր դեռ զգալ է տալու: Մտածում ես, թե ինչպես է հնարավոր այս հոտի մեջ բուժվել:**

**Նույն պատկերն է նաեւ ներսում՝ ծեփաթափ առաստաղներ ու պատեր, հալումաշ եղած հատակ, հնացած մահճակալային պարագաներ, համատարած խեղճություն, ժանգոտած խողովակներ, ջրի մետաղյա կաթկթոց. հայացքդ միայն սառը դատարկություն է արձանագրում, մեկ-երկու հիվանդ՝ ուրվականային լռությամբ, տխրություն-ճնշվածություն առաջացնող: Դուրս ես գալիս ասես բանտից, թեեւ դրսում ամառ է, բայց ներսումդ բան չի փոխվում:**

Վերջին շրջանում, հատկապես, Հայաստանի առողջապահության համակարգը որոշակի փոփոխությունների ենթարկվեց: Իհարկե, դժվար է ընդհանուր վերաբերմունք արտահայտել, բայց կարելի է արձանագրել, որ այժմ գործում են այնպիսի բժշկական կենտրոններ, որոնք հիվանդանոցային պայմաններով, տեխնիկական հագեցվածությամբ բավարար են: Հոգեբուժությունը, որ գործում է միայն պետական պատվերի շրջանակներում, այս առումով, մոռացության մատնված, անտեսված է ասես: Նորի, վերափոխումների շունչն այստեղով կարծես չի ուզում անցնել: Ոմանք սա պայմանավորում են միայն պետական հովանավորությամբ գործելու հանգամանքով, երբ մրցակցային գործոնի բացակայությունը դժվարացնում է ոլորտի զարգացման ընթացքը: Կա նաեւ ավելի սուբյեկտիվ տեսակետ, թե հոգեբուժությունը նախկին խորհրդային տարիներին հիմնականում այլախոհների համար պատժամիջոցի դեր է խաղացել, եւ շատ բժիշկներ (հները) շարունակում են իրենց վերաբերմունքը նախկին ստերեոտիպային մտածողությամբ. աշխատում են նույն մեթոդներով:

Ինչեւէ: Քասախի նեւրոզների կլինիկայի շենքային պայմաններն առիթ դարձան՝ փոքր-ինչ հանգամանալի եւ մոտիկից ծանոթանալու հոգեբուժության հայաստանյան ներկա վիճակին: Նախ ներկայացնենք մեզ դիմած քաղաքացու տպավորությունները, որ վերջերս է առնչվել այս ծառայությանը, ապա մեր տպավորությունները Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա կատարած այցելությունից, որտեղ զրուցեցինք կլինիկայի տնօրեն Արմեն Անանյանի եւ Հոգեբուժական բժշկական կենտրոնի գլխավոր տնօրեն Սամվել Թորոսյանի հետ:

### Այցելու հիվանդի կարծիք-տպավորությունից

*«Հոգեբուժական հիվանդանոցում աշխատող հոգեբույժն ամբուլատոր հիվանդներ պահելու հնարավորություններ չունի զուտ այն պատճառով, որ չունի դեղատոմս գրելու իրավունք»,* ասում է իմ զրուցակիցը: Առաջին հայացքից պարադոքսալ թվացող իրականություն, պարադոքսալ, որովհետեւ օրինականության դաշտում գործող յուրաքանչյուր բժիշկ այդ լիազորությամբ օժտված է: Սակայն խնդիրը օրինականությունը չէ, այլ այն շրջանցած հիվանդանոցային ներքին կարգը, որտեղ հայտնվում են որոշ բժիշկներ, երբ, օրինակ, պարտադրված են լինում բուժումը կատարել միայն հիվանդանոցում առկա դեղորայքի միջոցով, ինչը շատ հիվանդներին չի բավարարում:

Մեր զրուցակիցը մասնավորապես նկատի ունի տվյալ հիվանդության ախտորոշման պարագայում հայաստանյան դեղատնային վաճառքում գրանցված եւ արդեն փորձված դեղամիջոցի արդյունավետությունը (ընտրությունը նույն խմբին պատկանող պատրաստուկների միջեւ է): Ըստ նրա, կանդական արտադրության, օրինակ, տրիֆլուոպերազին կոչվող դեղամիջոցների համար դեղատոմսեր չեն տրվում, փոխարենը «Արփիմեդ» հայկական դեղագործական ընկերության արտադրանքն են նշանակում: Իսկ ամենաարդյունավետ, հոգեբուժության մեջ մեծ տեղաշարժ առաջացրած դեղամիջոցներից, օրինակ, զիպրեքսան ազատ վաճառքում կա, գնի պատճառով (տուփը՝ 102.000 դրամ) քչերին է մատչելի:

*«Հիվանդանոցի բժիշկը բուժումները կատարում է միայն տեղում առկա դեղերի միջոցով, որը վարչությունը որոշում է ինքնակամ, հիմնականում էժանագին, անորակ դեղամիջոցներ առաջարկելով: Հասկանալի է, պետությունն ունի որոշակի սահմանափակ հնարավորություններ, եւ եղած բյուջեն որոշակի դեղորայք ձեռք բերելուն կարող է բավարարել միայն: Սա խոչընդոտներ է ստեղծում այն հիվանդների համար, որոնք սեփական միջոցներով հնարավորություն ու ցանկություն ունեն ավելի որակյալ, նորագույն դեղորայք գնելու, դրանց սպասարկումը, սակայն, որպես հոգեմետ պրեպարատների, կատարվում է միմիայն դեղատոմսի միջոցով»:*

Այստեղից սկիզբ է առնում, այսպես ասած, դեղորայքային մի կարուսել, որը «պարտադրում» է հիվանդին անհրաժեշտ դեղը ձեռք բերել կոռուպցիոն եղանակով: *«Դեղորայքի միջոցով նույնիսկ բուժման իրավունքի մենաշնորհն իրենց ձեռքում են պահում: Ստեղծվում է անհեթեթ իրականություն, անհրաժեշտ դեղը վաճառքում կա, մինչդեռ հիվանդին անհասանելի է, քանի որ դեղատոմս չկա: Դեղատոմսի միջոցով դեղ հայթայթելու մենաշնորհն օգտագործվում է՝ առավել շահույթ կորզելու:*

*Առհասարակ այս հիվանդների իրավունքները բառիս բուն իմաստով ոտնահարված են, նրանց որեւէ բողոք՝ սոցիալական լինի, թե զուտ մարդկային, անտեսվում, երբեմն ծաղրվում է: Այս մարդիկ կարիք ունեն որոշակի ռեաբիլիտացիայի, այնպիսի վերականգնողական զբաղմունքի կենտրոնների, ինչպիսիք ընդունված եւ գործում են դրսում: Դա անհրաժեշտ է, այսպիսի կենտրոններում նրանք կարող են հանդիպել իրենց նմանների հետ, զբաղվել՝ նկարել, խաղալ եւ այլն»:*

### Հոգեբուժության ընդհանուր վիճակը Հայաստանում

Նախկին հոգեբուժական կլինիկաները՝ Նորքի, Ավանի, Սովետաշենի եւ Քասախի նեւրոզների կենտրոնը, նարկոլոգիական դիսպանսերը ներկայումս ներառված են ընդհանուր մեկ համակարգում, գլխավոր կենտրոնը տեղակայված է Նուբարաշենի (նախկին Սովետաշենի) կլինիկայում՝ տնօրենությամբ Սամվել Թորոսյանի: Նուբարաշենի հոգեբուժական կլինիկան բնակատեղից հեռու մեկուսի մի վայրում գործում է ավելի քան երեսուն տարի եւ ամենախոշորն է եղածներից: Հիվանդանոցի ինը բաժանմունքներում հոգեկան տարբեր շեղումներով շուրջ 320 հիվանդներ են բուժվում: Այստեղ է տեղակայված նաեւ ծանր իրավախախտումներ կատարած, սոցիալապես վտանգավոր հիվանդների հատուկ, հարկադիր բաժանմունքը՝ ոստիկանության կողմից վերահսկվող: Այս մարդկանց գերատեսչական հանձնաժողովը ճանաչել է անմեղսունակ եւ այստեղ են դատարանի որոշմամբ:

Հիվանդանոցի շենքը շահագործման օրից կապիտալ վերանորոգման չի ենթարկվել, եղել են կոսմետիկ վերանորոգչական գործեր: Ընդհանուր շուրջ 8 հա տարածքում տեղակայված բոլոր մասնաշենքերի հիմնավոր նորոգումը բավականին ծավալուն աշխատանք եւ ֆինանսներ է պահանջում:

Հիվանդանոցի չորս բաժանմունքներ կատարած մեր պատահական այցելության տպավորությունը տարբեր էր: Հիվանդասենյակները՝ լայն, մեծ տարածքներով, անհրապույր, բնականաբար հիվանդների հետ անգամ շատ կարճ, 2-3 րոպեանոց շփումը՝ ճնշող: Հիվանդասենյակ տանող նեղ, երկար միջանցքների ձախակողմյան մասի սենյակները բավարար վիճակով, մի քանիսը կոկիկ, մի քանիսն էլ վատ պայմաններ ունեն: «Արիստոն» ջրի կաթսաները ապահովում են տաք ջուր (պատին ջրի ռեժիմ կա փակցված): Ամենից տպավորիչը միջանցքների երկայնքով մեկ ձգվող բույսերի, ծաղիկների, կանաչի առատությունն է, խնամքով պահպանված: Յուրաքանչյուր բաժանմունքում (կանանց՝ երկու, տղամարդկանց՝ չորս) 27-40 հիվանդ բժշկական օգնություն ստանում են պետական միջոցներով, որ բավական նվազ գումար է կազմում, բուժսպասարկումից մինչեւ կենցաղային անհրաժեշտության համար շուրջ 3100-4950 դրամ՝ ամսական: Դժվար չէ պատկերացնել նաեւ բուժանձնակազմի աշխատանքային բարդությունները՝ պայմանավորված ե՛ւ շենքային պայմաններով, ե՛ւ առհասարակ հոգեկան հիվանդությունների առանձնահատկություններով, ե՛ւ սոցիալական վիճակով: Ինչպես հերթապահ մի բուժքույր ասաց՝ տաժանակիր աշխատանք, հոգնեցուցիչ՝ ֆիզիկապես եւ հատկապես հոգեպես, եւ սրա դիմաց ամսական 60.000 դրամ աշխատավարձ: Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի տնօրեն **Արմեն Անանյանը** թվային, նկարագրական մանրամասն տեղեկություններ է տալիս. *«Այն, ինչ մարդկային գործոնով է պայմանավորված, մենք անում ենք մեր ուժերի հնարավորության սահմաններում: Շենքային պայմանների բարելավման լուրջ խնդիր ունենք, ներշենքային ընթացիկ բարենորոգումներ էլ որ լինեն, վիճակը կփոխվի: Չլուծված հարց է նաեւ կադրերի վիճակը: Բուժանձնակազմը ծերացած է: Երիտասարդները հոգեբուժություն չեն ուզում մտնել, ծանր աշխատանք է, չվարձատրվող, ինչպես ասում են, անշնորհակալ»:*

### Խոցելի տեղեր, համեմատություններ

Նախկինում հոգեբույժին դիմելու մարդկանց մեջ եղած որոշակի բարդույթներն այժմ եթե ոչ ամբողջովին վերացել, բայց փոփոխություն կրել են, հիմա շատացել է հոգեբույժին դիմող հիվանդների քանակը, ինչը գլխ. տնօրեն **Սամվել Թորոսյանը** պայմանավորում է մասնավորապես դեղորայքային անվճար սպասարկումով, մնացած բավարար բուժծառայություններով:

Հոգեկան հիվանդների ընդհանուր թիվը Հայաստանում հասնում է մոտ 40.000-ի, ժառանգական եւ ձեռքբերովի հիվանդությունների տարբեր դրսեւորումներով, գերակշռողը շիզոֆրենիայի տարբեր աստիճաններն են: Ստացիոնար բուժում ստացողներից 320-ը Նուբարաշենի կլինիկայում են, Քասախի նեւրոզների կենտրոնում՝ 30-ը: Այս վերջինիս շենքային պայմաններին անդրադառնալով՝ պրն Թորոսյանը համաձայնեց դրա անհամատեղելիությանը առողջապահության նորմերին եւ կապիտալ վերանորոգման անհետաձգելիությանը, տեղեկացնելով, որ այդ նպատակով «Հայաստան» հիմնադրամը նախատեսել է 165 մլն դրամի հատկացումներ: Սա մխիթարական է, սակայն մինչ այդ հիվանդանոցում գտնվող այդ մարդիկ բուժօգնություն ստանում են ծայրահեղ վատ պայմաններում, որը լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

Մեր այս հրապարակման առիթ տվող մյուս հարցի՝ դեղորայքի վերաբերյալ գլխ. տնօրենը նկատեց. «Յուրաքանչյուր հիվանդ բժշկի ընտրության ազատ իրավունք ունի: Որեւէ բժիշկ եթե լիցենզավորում ունի, կարող է դեղատոմս գրել»:

Հոգեբուժական ծառայություններից դժգոհ քաղաքացու մտահոգությունը դեղորայքի սահմանափակ ընտրությանն էր վերաբերում, թե հիվանդին պարտադրվում է հիվանդանոցային արսենալում եղած դեղամիջոցների բուժում միայն: Ըստ տնօրենի, բոլոր հիվանդներն անվճար ստանում են հիվանդանոցներին պետության տրամադրած անխտիր բոլոր դեղամիջոցները:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաստատած մի քանի հիմնական դեղամիջոցների առկայությամբ տվյալ բժշկական ծառայությունը համարվում է ապահովված: Ըստ տնօրենի, Հայաստանում այս առումով հոգեբուժական ծառայությունը համապատասխանում է ընդունված չափանիշներին: Որպես օրինակ նա ներկայացրեց անցած տարի Ռուսաստանի առաջատար կլինիկաների մի քանի մասնագետների տպավորությունը եւ զարմանքը մեր հոգեբուժարաններում եղած ամենաարդիական դեղամիջոցներից: Աշխատանքի միջազգային սեփական փորձից (նա համաշխարհային առողջապահական կազմակերպության ռեգիոնալ կոորդինատորն է) երկու երկրների համեմատության՝ միմյանցից շատ տարբեր օրինակներ բերեց՝ Կրետե կղզու բազմապրոֆիլ մի հիվանդանոցի հոգեբուժական մասնաճյուղի հրաշալի պայմանների մասին եւ թե ինչպես Ռուսաստանի որոշ շրջանների հոգեբուժարաններում ծանր նոպաների մեջ գտնվող հիվանդներին հանգստացնելու նույնիսկ ծայրահեղ ձեւեր են կիրառվում (կապկպած պահել ու այլն), դեղամիջոցների պակասի պատճառով: Մինչդեռ հայաստանյան դեղատնային շուկայում շրջանառվում են շուրջ 50 տեսակի դեղամիջոցներ: Տնտեսական ճգնաժամով պայմանավորված, այս շրջանում տեղական արտադրության դեղամիջոցների նշանակումներ են արվում: Այն հարցին, թե ինչով է պայմանավորված հիվանդների արտասահմանյան դեղորայքին տրված նախապատվությունը, նա նշեց, որ դրանք նույնն են, որակային տարբերություններով:

Մեր զրուցակիցը Հայաստանում հոգեբուժության մասնավորեցմանը վերապահումով է վերաբերվում՝ նկատելով, որ ժողովուրդը սոցիալապես հիմնականում անվճարունակ է եւ չի կարող հոգալ երկարատեւ բուժում պահանջող նման հիվանդությունների ծախսերը: «Պետությունը այդ հոգսը վերցրել է իր վրա եւ վատ չի կատարում»:

### Հոգեբուժության ապագան

Ժամանակակից կյանքի պայմաններում մարդը խոցելի է դառնում հատկապես հոգեբանորեն, ավելի եւ ավելի հակվում հոգեկան անհավասարակշիռ վիճակների: Այս պարագայում հոգեբուժական ծառայությունների որակական փոփոխությունների պահանջ է առաջանում, նկատվում է ապակենտրոնացման, հասարակությանը մերձենալու միտում: *«Մեծ կլինիկաներն ապագա չունեն: Իմ ստրատեգիան հիվանդին շրջապատից, ընտանիքից չկտրելն է: Հոգեմետ դեղամիջոցների էլ ավելի զարգացման պարագայում ստացիոնար բուժման անհրաժեշտությունը հիմնականում կվերանա կամ բուժումը կանցնի բազմապրոֆիլ հիվանդանոցների հոգեբուժական բաժանմունքներում», ասում է Ս. Թորոսյանը: Ներկայումս արտահիվանդանոցային (օֆիսային) պայմաններում բուժման հնարավորություն տալիս է Նորքի հոգեբուժական կլինիկայի երկու բաժանմունք (բարեգործական միջոցներով ստեղծված), որտեղ առաջին անգամ փսիխոտերեւույթներ ունեցած հիվանդությունների հետագա բարդությունները փորձում են կանխել նորագույն դեղամիջոցներով: Այս բաժանմունքներում կիրառվում են նաեւ թերապիայի այլ ձեւեր, օրինակ՝ արտթերապիան (նկարչություն, քանդակ) եւ այլն»:*

Այսուհանդերձ՝ Հայաստանում ըստ լիցենզավորման գործող օրենքի հիվանդը իրավունք ունի բուժօգնություն ստանալու շենքային բավարար պայմաններում: Անկախ վերանորոգման, բարեկարգման ապագա ծրագրերից, ներկա ծայր անբարեկարգ վիճակում բուժում ստացող հիվանդի իրավունքներն արդյոք ոտնահարվա՞ծ չեն:

Հիվանդի՝ դեղորայքային նույն խմբի տարբեր պրեպարատների միջեւ ընտրությունն արգելող բժշկի պարտադրած դեղատոմսը հիվանդի իրավունքների ոտնահարում չէ՞ եւ նաեւ՝ բժշկի:

Եվ վերջապես, որքանո՞վ է բարոյական (իբր տնտեսական ճգնաժամի պատրվակով) հայկական արտադրության անարդյունավետ դեղամիջոցի պարտադրումը (այս մասին վկայեցին իմ բոլոր զրուցակիցները): Եվ մի՞թե դրան հետեւող մարդկային ճգնաժամն ավելի վտանգավոր չէ: Այս եւ այլ հարցերի մասին թեման կշարունակենք հաջորդ հրապարակումներում:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Ավելին՝ քան հայերից շատերը

***«Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը գրում է Ուելսում ապրող մի հոգեւոր հովվի մասին, որն ավելին է արել Հայկական դատի համար, քան հայերից շատերը: Ստորեւ՝ թարգմանաբար:***

Անհավատալի է, բայց իրավ: Էյլիան Ուիլյամսն ավելին է արել պաշտպանելու հայկական դատը, քան հայերից շատերը, հակառակ որ ոչ նախնիների գծով, ոչ էլ ամուսնական կապերով առնչություն չունի հայերի հետ: Իր բարեգործությունների համար նա ոչ ճանաչման է արժանացել, ոչ էլ գնահատանքի: Բացի Լոնդոնում ապրող մի փոքր խումբ մարդկանցից, հայերի մեծամասնությունը անտեղյակ է նրա գոյության եւ գործադրած անձնուրաց ջանքերի մասին:

Առաջին անգամ հայերի հետ առնչվել է 1998-ին, երբ իրեն ծանոթ մի հայ խնդրել է աջակցություն, որ հայկական եկեղեցական երգչախումբը մասնակցի Էյսթեդֆոդում կայանալիք «Ուելսյան մշակութային փառատոնին»: Դա նրան հուշել է ստեղծել «Ուելս-Հայաստան զորակցության խումբը»:

2001-ի ապրիլի 24-ին նա Կարդիֆում (Ուելս) տեղակայված «Խաղաղության տաճարում» առաջին անգամ կազմակերպել է Հայերի ցեղասպանության հիշատակի օր: Ապա նրան հաջողվել է համոզել Ուելսի Ազգային ժողովին, որ 2002-ի հոկտեմբերին ընդունի Հայոց ցեղասպանության փաստը: Նա այդ առթիվ Ազգային ժողովի շենքում կազմակերպել է հատուկ հիշատակի հանդիսություն, որին ներկա է գտնվել Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպանը:

Իր հետեւողական ջանքերի շնորհիվ Գվինեդի կոմսության խորհուրդը դարձավ առաջին տեղական ինքնավարության մարմինը Մեծ Բրիտանիայում, որ 2004-ի մարտին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Նույն տարվա հոկտեմբերին Ուիլյամսը կազմակերպեց ԼՂՀ-ի վարչապետի հանդիպումը Ուելսի Ազգային ժողովի նախագահի (խոսնակի) հետ, դրանով խթանելով Արցախի պետականության օրինականությունը:

Երկու տարի անց նա կարողացավ համոզել Ուելսի Ազգային ժողովի անդամների մեծամասնությանը, որ նեցուկ կանգնեն ասորիների եւ հայերի ցեղասպանության assyrian/Armenian Genocide Early Day բանաձեւին: 2007-ի հունվարին նա կազմակերպեց Հրանտ Դինքին նվիրված հուշ-երեկո բրիտանական խորհրդարանում: Նաեւ քարոզարշավ ծավալեց Համայնքների պալատում՝ ի նպաստ Հայոց ցեղասպանության բանաձեւերի եւ կարողացավ ձեռք բերել խորհրդի անդամներից 182-ի ստորագրությունները:

2007-ի նոյեմբերի 3-ին Կարդիֆում Հայոց ցեղասպանության հուշարձանի բացման հանդիսությանը, որը կազմակերպվել էր Էյլիան Ուիլյամսի եւ Ջոն Թորոսյանի ջանքերով, Ուելսի ԱԺ-ի խոսնակը սուր ակնարկներ էր արել Թուրքիայի հասցեին: Թուրք խուլիգանները փորձել էին խանգարել արարողությունը, իսկ ամիսներ անց նրանց հաջողվել էր սրբապղծել ցեղասպանության հուշարձանը:

Տարիներ շարունակ մեծ հիացմունքով հետեւել էի այս «օտար հովվի» չհրապարակված գործունեությանը, սակայն անմիջական ծանոթություն չէի հաստատել նրա հետ մինչեւ անցյալ ամիս, երբ նրանցից ստացա բրիտանական Համայնքների պալատին ներկայացված իր Early Day Motion նոր բանաձեւի տեքստը, որով Թուրքիայից պահանջվում է որպես «փոխհատուցման միջոցառում» իրենց համապատասխան պատրիարքարանների իրավասությանը վերադարձնել այն ավելի քան 2000 հայկական, ասորական եւ սիրիական եկեղեցիներն ու կրոնական շինությունները, որոնք բռնագրավել է թուրքական կառավարությունը 1915-ի ցեղասպանությունից հետո:

Բանաձեւը նաեւ բրիտանական կառավարությունից պահանջում է ճանաչել, որ այս փոքրամասնությունները 1915-ից հետո ենթարկվել են էթնիկական զտումների, որոնց մասին վերջերս խոստովանել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը: Բանաձեւն առ այսօր ստացել է բրիտանական խորհրդարանի անդամներից 33-ի աջակցությունը:

Բանաձեւը գրավեց ուշադրությունս, որովհետեւ վերջին ամիսներին իմ սյունակներում եւ դասախոսությունների ժամանակ քանիցս հետապնդել եմ այդ նախաձեռնությունը: Հաճելի զարմանք էր իմանալ ուելսցի հովվի էլ. փոստով ուղարկած հաղորդագրությունից, որ նա այդ քայլին դիմել էր կարդալուց հետո իմ հոդվածները եւ հատկապես Համայնքների պալատում մայիսի 7-ին արտասանած իմ խոսքի տեքստը:

Ամերիկահայերը պետք է հետեւեն Ուիլյամսի լավ օրինակին եւ նման մի բանաձեւ էլ ներկայացնեն Մ. Նահանգների Կոնգրեսին: Գործնականորեն անհնարին կլինի որեւէ կոնգրեսականի դեմ գնալ նման մի բանաձեւի, որը կոչ է անում վերադարձնել հայկական պաշտամունքի վայրերը իրեն իրավական տիրոջը՝ Պոլսո հայոց պատրիարքարանին: Նման որոշումի ընդունումն ավելին կլինի, քան ցեղասպանության սոսկ ճանաչումը, քանի որ կներառի նաեւ հայերի հսկայական կորուստներից մի փոքր մասի փոխհատուցումը:

Եվրոպայում ապրող հայերն ավելի առաջ պետք է գնան՝ դատական հայց հարուցելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, պահանջելով այդ եկեղեցիների եւ կրոնական հուշարձանների անմիջական վերադարձը հայկական պատրիարքարանին: Անհասկանալի է, որ այս հայկական եկեղեցիները (նրանք, որ դեռեւս չեն քանդվել) վերածվել են մզկիթների, պահեստների եւ նույնիսկ բնակարանների, եւ ոչ ոք չի վիճարկում իրերի այս ամոթալի վիճակը: Կարելի է երեւակայել, թե աշխարհով մեկ ինչ աղմուկ կբարձրացնեին հրեաները, եթե գերմանական կառավարությունը դեռեւս իր ձեռքում պահեր Հոլոքոսթի ժամանակ նացիստների առգրաված թեկուզ մեկ սինագոգ:

Գլխարկս հանելով խոնարհվում եմ Էյլիան Ուիլյամսի առաջ: Իմ միակ ցանկությունն է, որ հայերը օրինակ վերցնեն այս բարի հովվի արդարամիտ գործունեությունից, որի ջանքերն արժանի են պատշաճ գնահատանքի ինչպես Հայաստանի Հանրապետության, հայկական եկեղեցու, այնպես էլ համայն աշխարհի հայերի կողմից:

Թարգմ. Հ. Ծ.

ՀԱՄԱՌՈՏ

## ԱՄՆ-Սիրիա բանակցություններ Դամասկոսում

**Մերձավոր Արեւելքում ԱՄՆ հատուկ դեսպանի օգնական Ֆրեդերիկ Հոֆֆը հուլիսի 15-ին Դամասկոսում անցկացրել է մի շարք հանդիպումներ, որոնց նպատակը Սիրիա-Իսրայել հաշտության բանակցությունների վերսկսումն է: Այդ մասին հաղորդում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը, վկայակոչելով Մերձավոր Արեւելքում ԱՄՆ հատուկ դեսպանորդ Ջորջ Միտչելի գրասենյակի աղբյուրներ:**

**Անցած կիրակի Ֆրեդերիկ Հոֆֆը ժամանել էր Իսրայել: Նրա առաքելության կապակցությամբ պաշտոնական մեկնաբանություն չէր հրապարակվել:**

**Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը քանիցս հայտարարել է, որ պատրաստ է բանակցել Դամասկոսի հետ, ընդսմին ընդգծելով, որ «գլխավոր պայմանը պետք է լինի նախապայմանների բացակայությունը»:**

**Սիրիան պնդում է, որ հաշտության բանակցությունները կարող են վերսկսվել, եթե Իսրայելը երաշխավորի Գոլանի բարձունքների վերադարձը:**

**Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն քանիցս ասել է, որ ինքը մտադիր չէ քննարկել Գոլանի բարձունքները Սիրիային վերադարձնելու հարցը:**

## Sinopec-ի նախկին ղեկավարը դատապարտվեց մահապատժի

### *2009-ին ՉԺՀ-ում 5 հազար մահապատիժ*

**Չինական Sinopec նավթային ընկերության նախկին ղեկավար Չեն Տունհայը հուլիսի 15-ին դատապարտվել է մահապատժի: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով ՉԺՀ պետական Սինհուա գործակալության հրապարակումը:**

**Մահապատիժը ի կատար է ածվելու երկու տարի հետո: Եթե այդ ժամանակամիջոցում Չեն Տունհայը որեւէ օրինախախտում չկատարի, ապա ենթակա կդառնա նվազ խիստ պատժի, նշում է գործակալությունը:**

**Sinopec-ը Չինաստանի խոշորագույն ընկերություններից մեկն է: Չեն Տունհայը այնտեղ ղեկավար պաշտոններ էր զբաղեցրել 1997-2007 թվականներին: 2007-ի հուլիսին նա թողել էր Sinopec-ը, վկայակոչելով «անձնական պատճառներ»: Սակայն 2007-ի հոկտեմբերին հայտնի էր դարձել, որ Տունհայը ձերբակալված է կաշառակերության մեղադրանքով: Քննությունից պարզվել էր, որ 1997-2007 թթ. նա 195,7 մլն յուան (28,8 մլն դոլար) կաշառքներ է ստացել:**

**Չինաստանը մահավճիռներ ի կատար ածելու գծով համաշխարհային առաջատար է: Իրավապաշտպան կազմակերպությունների տվյալներով, 2009 թվականին ՉԺՀ-ում նախատեսվում է մահապատժի ենթարկել մոտ 5 հազար մարդու: Նրանց մեջ զգալի թիվ են կազմում ֆինանսական հանցագործությունների մեջ մեղավոր ճանաչված անձինք:**

## Իսրայելական ռազմանավեր Կարմիր ծովում

**Իսրայելցի եւ եգիպտացի պաշտոնական անձինք երեկ BBC-ին հայտնել են, որ իսրայելական երկու ռազմանավ Միջերկրական ծովից Սուեզի ջրանցքով մտել են Կարմիր ծով:**

**Իսրայելական լրատվամիջոցները հրթիռային երկու փոքր ռազմանավերի այդ տեղաշարժը բնութագրել են որպես Իրանին ուղղված նախազգուշական ազդանշան:**

**Նույն աղբյուրները նաեւ հաղորդում են, որ հունիսին Սուեզի ջրանցքով անցել է իսրայելական մի սուզանավ, որը հուլիսի 5-ին վերադարձել է մշտական խարսխակայան:**

**Դիտորդները նշում են, որ իսրայելական նավերը կանոնավորապես անցնում են Սուեզի ջրանցքով, բայց երկու ռազմանավերի Կարմիր ծով մտնելը հատկանշական է, որովհետեւ այդ մասին առաջինը հայտարարեցին հենց իսրայելցի պաշտոնյաները:**

**Իսրայելի ազգային անվտանգության հարցերի հետազոտական ինստիտուտի փորձագետ Շլոմո Բլոմը կարծում է, որ տեղեկատվության այդ «արտահոսքը» միտումնավոր է, որպեսզի Իրանը հասկանա, որ Իսրայելը «հնարավորություն ունի մոտենալու» իրանական ափերին:**

**Եգիպտոսի արտգործնախարար Ահմեդ Աբուլ Գեյթը BBC-ի թղթակցի հետ զրուցելիս պարզաբանել է, որ ռազմանավերը Սուեզի ջրանցքով տեղաշարժվելու իրավունք ունեն, եթե վտանգ չեն ներկայացնում Եգիպտոսի համար:**

# odnoklassniki.ru-ն ինտերնետ ակումբներին օգնում է դիմակայել տնտեսական ճգնաժամին

odnoklassniki.ru սոցիալական ցանցն օգնում է գտնել ոչ միայն հին ընկերներին, այլեւ նպաստում է ինտերնետ ակումբների աշխատանքին: Երեւանյան ակումբների աշխատակիցներն ասում են, որ այցելուների թիվը նվազել է: Հաճախորդների այն հատվածն էլ, որ դեռ շարունակում է օգտվել ինտերնետ ակումբներից, հիմնականում այստեղ է գալիս սոցիալական ցանցեր եւ ծանոթության կայքեր այցելելու համար: odnoklassniki.ru իր հանրահայտությամբ առաջնային հորիզոնականներում է եւ ոչ միայն Հայաստանում:

25-ամյա **Անաստասիա Նազրիշվիլին** odnoklassniki.ru կայքում գրանցվեց 6 ամիս առաջ: Ասում է, որ պատճառը հետաքրքրություն էր, իսկ հետո այն վերածվեց սովորության: Յուրաքանչյուր օր նա գալիս է Թբիլիսիի բիզնես կենտրոնում գործող ինտերնետ ակումբ՝ կայքի միջոցով շփվելու ընկերների հետ: «Ես գտել եմ իմ մանկության ընկերոջը, համադասարանցիներին: Այդ իսկ պատճառով ամեն օր այցելում եմ այս կայքը», ասաց Անաստասիան: Կենտրոնում գործող ինտերնետ ակումբի տնօրենն ասում է, որ մեկ օրվա ընթացքում ակումբ է հաճախում շուրջ 100 այցելու: «Տնտեսական ճգնաժամը նաեւ մեր բիզնեսի վրա է ազդել: Հաճախորդների թիվը նվազել է: Սոցիալական ցանցերն օգնում են մեր աշխատանքին: Հաճախորդների ավելի քան 50 տոկոսն այստեղ է գալիս odnoklassniki.ru այցելելու համար: Եթե չլիներ այդ կայքը, մեր հաճախորդների թիվն էլ պակաս կլիներ», ասաց **Գեորգի Գագնաձեն**:

2006 թվականի մարտին ստեղծված կայքը ներկայումս ունի 30 միլիոն գրանցված օգտվող: ԱՊՀ տարածքում odnoklassniki.ru կայքն այսօր հանրահայտությամբ մրցակցում է mail.ru, rambler.ru եւ yandex.ru կայքերի հետ: Կայքի այցելուների 68 տոկոսը Ռուսաստանից է, 1.2-ը Հայաստանից եւ 1.4 տոկոսը՝ Վրաստանից:

odnoklassniki.ru եւ սոցիալական մյուս ցանցերի շնորհիվ աճեց հետաքրքրությունը ինտերնետի նկատմամբ: «Համացանցից օգտվողների մի հատված էլ ինտերնետին է միանում հենց այդ կայքից օգտվելու համար: Սակայն odnoklassniki.ru չունի այն ազդեցությունը, ինչ ունեն google-ը կամ yahoo-ն, որոնք փոխեցին մոտեցումը ինտերնետի նկատ-




մամբ», ասաց Caucasus online ընկերության նորարարական ծրագրերի ղեկավար **Արթուր Թորոսյանը**: Caucasus online ընկերությունը Վրաստանում ինտերնետ մատակարարող ընկերություններից մեկն է, որն այսօր ունի ավելի քան 68.000 հաճախորդ:

Երեւանում գործող «Սիմբա» ինտերնետային ակումբի աշխատակից **Շուշան Ալեքսանյանն** ասում է, որ նախորդ տարվա համեմատությամբ հաճախորդների թիվը նվազել է գրեթե 70 տոկոսով: Պատճառը, նրա կարծիքով, տնտեսական ճգնաժամն է եւ ինտերնետի հասանելիությունը: «Եթե օրական 30 այցելու ունենում ենք, ապա դա լավ ցուցանիշ է: Ակումբում 15 համակարգիչ ունենք, սակայն բոլորը միասին հազվադեպ են զբաղված լինում: Լավ է, գոնե odnoklassniki.ru եւ ծանոթության կայքերն էլ կան: Հաճախորդները հիմնականում այդ կայքերն են այցելում, նաեւ գալիս են խաղերի համար», ասաց Շուշան Ալեքսանյանը:

Հայաստանի ինտերնետ միության նախագահ **Իգոր Մկրտումյանը** ներկայացնելով Միջազգային Տելեկոմ միության տվյալները, նշում է, որ տարածաշրջանում ինտերնետից օգտվողների թվով առաջնայինն Ադրբեջանն է՝ 17 տոկոս, Վրաստանում 8 տոկոս է, Հայաստանում ինտերնետից օգտվում է բնակչության ընդամենը 6.2 տոկոսը: Եթե Վրաստանում սեփական բնակարան ինտերնետ անցկացնելու համար նվազագույնը պահանջվում է ընդամենը 30 լարի, ինչը կազմում է շուրջ 6500 դրամ, ապա Հայաստանում անհրաժեշտ է 8000 դրամ, ընդ որում ինտերնետ կապի արագության ու որակի տարբերություններն ակնհայտ են: «Հայաստանում ինտերնետի հասանելիության հարց չկա, խնդիրը մատչելիությունն է: Հայաստանում ինտերնետի գները դեռեւս բավական բարձր են, որպեսզի բնակչության զգալի մասը կարողանա օգտվել համացանցից», ասաց Իգոր Մկրտումյանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ֆիլմեր մարդկային էության, հիասթափության եւ պատերազմների մասին

## «Ոսկե ծիրան» կինոփառատոնի միջազգային խաղարկային ֆիլմերը

Արդեն 6 տարի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն ունի հստակ սկզբունքներ, որոնցից հատկապես առանձնանում է երիտասարդ ստեղծագործողներին ներկայանալու հնարավորություն ընձեռելը: Կինոփառատոնի մրցութային բոլոր ծրագրերում ընդգրկված են թե՛ հայտնի, թե՛ սկսնակ ռեժիսորների աշխատանքներ: Նպատակն է՝ համագործակցության դաշտ ստեղծել, փոխանակել մտքեր:

Կինոգետ **Միքայել Ստամբուլցյանը** նկատում է, որ կինոփառատոնի անցկացման այս ձեւաչափն արդարացնում է սպասելիքները: Բազմաթիվ երիտասարդ ռեժիսորների հանդիպումը կինոյի ասպարեզում մեծ փորձ ունեցող արվեստագետների հետ դարձել է հասկանալի. եթե անգամ չեն համագործակցում, հաստատ ինչ-որ բան յուրացնում են:



ՖՈՏՈԼՈՒՐ

Այս տարվա միջազգային խաղարկային ֆիլմերի ծրագրում էլ ընդգրկված են տարբեր սերունդների ներկայացուցիչներ:

«Լեգենդ, ռուսական դասական կինոյի լավագույն ներկայացուցիչ» այսկերպ ներկայացրեց ռեժիսոր Անդրեյ Խրժանովսկուն Ստամբուլցյանը:

Խրժանովսկու «Մեկուկես սենյակ կամ սենտիմենտալ ճանապարհորդություն դեպի հայրենիք» ֆիլմը՝ ընդգրկված «Ոսկե ծիրան» կինոփառատոնում, Իոսիֆ Բրոդսկու մասին է: Խրժանովսկին Բրոդսկու ժամանակակիցն է, սակայն նրան երբեւէ չի հանդիպել: «Տարիներ առաջ ունեի այդպիսի հնարավորություն, բայց չօգտագործեցի: Երիտասարդ էի, կարծում էի, դեռ հնարավորություն կունենամ նրա հետ հանդիպելու, բայց... Հիմա զղջում եմ, որ այդ եզակի առիթը բաց թողեցի», նկատում է Խրժանովսկին:

Երբ մի հարցազրույցում Բրոդսկուն հարցրեցին, թե երբեւէ կվերադառնա՞ հայրենիք, պատասխանեց. «Նման ուղեւորությունը կարող է տեղի ունենալ միայն ծպտված»: Խրժանովսկին, ընտրելով հեգնական հեքիաթի ժանրը, պատկերացրել է, թե Բրոդսկին ինչպես է ձեռնարկել ուղեւորությունը: Բանաստեղծը նավարկում է դեպի մանկության եզերքը: Բրոդսկու կենսագրության մի շարք փաստեր ձուլվելով, հանդիսատեսին տանում են դեպի 50-60-ականների սկզբի ԽՍՀՄ, Եվրոպական քաղաք Լենինգրադ:

«Ֆիլմում համակցված է միանգամից երեք ժանր՝ գեղարվեստական, վավերագիր կինո եւ անիմացիա: Իհարկե չափազանց դժվար էր երեք՝ միմյանցից խիստ տարբեր ժանրերի համաձուլումը, սակայն հենց այդ դժվարությունը հաղթահարելով հերթական անգամ հաստատվում ես, փնտրում գեղեցիկը», նկատում է Խրժանովսկին: Որպեսզի Բրոդսկու կերպարը լիարժեք լինի՝ ռեժիսորը զրուցել է բանաստեղծի ընկերների, մտերիմների հետ, կարդացել նրա ինքնակենսագրականը:

«Վավերագիր կինո չէ, Բրոդսկու միջոցով, ներկայացնում եմ ժամանակաշրջան», ասում է ռուս ռեժիսորը:

«Դժվար է ֆիլմ նկարահանել Աֆղանստանում: Սակայն այդ դժվարությունները հնարավորություն են տալիս լինել ավելի ուժեղ ու ազատ արտահայտել այն, ինչ մտածում ես», պատմում է մեկ այլ օտարերկրյա ռեժիսոր **Սիդդիք Բարմաքը**:

«Ափիոնի պատերազմը» ֆիլմը հենված է իրական փաստերի վրա: Թալիբների վարչակազմի տապալման եւ զրահամեքենայում ապրող աֆղանական ընտանիքի մասին է: «Ֆիլմը իրականությունը շոշափելու հնարավորություն է տալիս: Ապագայի մասին տպավորություններն ու ակնկալիքները, կարծես, անավարտ են: Մեր հասարակության մեջ խնդիրները շատ են, հետեւաբար ապագայի հանդեպ լուսավոր կետերն էլ բացակայում են»:

«Ինդոնեզիայից ժամանած չինացի ռեժիսոր Էդվինը բազմաթիվ կարճամետրաժ ֆիլմերի հեղինակ է: «Կույր խոզը, որ ուզում է թռչել» ֆիլմը Էդվինի առաջին լիամետրաժ ստեղծագործությունն է: «Այլ երկրում ապրելն ու համարվել փոքրամասնություն չափազանց դժվար է: Խնդիրը կապված է ինքնության, զգացմունքների հետ: Կարծես խեղդվես, օդը չբավականացնի: Ֆիլմը տարբեր զգացմունքների պոռթկումն է: Ներկայացնում եմ փոքրամասնության վիճակը հասարակության մեջ, նրանց դիրքորոշումը, կրոնական պատկանելությունը: Նրանք էլ ունեն հույսեր, երազանքներ», ասում է Էդվինը:

Ռեժիսորը խոստովանում է, որ ֆիլմի միջոցով փորձում է բացահայտել նաեւ իրեն. «Չինացի եմ, սակայն ապրում եմ Ինդոնեզիայում: Խզված է կապը արմատներիս հետ: Ինդոնեզիայում շատերն են այսպես ապրում: Հուսով եմ՝ այս ֆիլմը երիտասարդության շրջանում հարցեր կառաջացնի ու կստիպի մտածել, գործել»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հունգարիայում Երեւանի դրամատիկական թատրոնի հաջողությունը

**Երեկ Երեւանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական պետական թատրոնի գեղ. ղեկ. Արմեն Խանդիկյանը, գրական բաժնի վարիչ, գրող Նորայր Ադալյանը, գլխ. նկարիչ Կարեն Գրիգորյանը եւ վաստակաշատ դերասաններ Արթուր Ութմազյանն ու Հովհաննես Բաբախանյանը հանդիպեցին լրագրողների հետ: Առիթը՝ Հունգարիայի Գյուլա քաղաքում անցկացվող շեքսպիրյան փառատոնն էր, որտեղ դրամատիկական թատրոնը ներկայացրեց «Մակբեթը»: Հունգարիայում շուրջ 46 տարի անցկացվում է թատերական փառատոն: Վերջին 6 տարիներին այն վերածվել է շեքսպիրյան փառատոնի, որն այս տարի մեկնարկել է հունիսի 29-ին եւ կավարտվի օգոստոսի 8-ին, ընդգրկելով նաեւ այլ ուղղություններ: Բեմադրիչ Արմեն Խանդիկյանի «Մակբեթը» փառատոնի մասնակից մի քանի տասնյակ երկրներից ժամանած բեմադրիչների ու դերասանների վրա մեծ տպավորություն է թողել թե՛ ռեժիսորական, թե՛ դերասանական եւ թե՛ նկարչական հստուկ լուծումներով ու հրաշալի խաղով: Դա են վկայում բազմաթիվ արձագանքները, տեղի մամուլի ու նաեւ հայտնի արվեստագետների կարծիքները: Իսկ փառատոնի տնօրեն Ջոզեֆ Գեդեոն, երբ անցած տարի Երեւանում շեքսպիրյան փառատոնի օրերին դիտել է «Մակբեթը», նշել է. «Ներկայացումը այնպիսի հզոր տպավորություն գործեց ինձ վրա, որ շուրջ վեց ամիս տպավորությունների տակ էի: Այն խորը զգացմունքային ներկայացում է՝ ռեժիսորական հետաքրքրական լուծումներով, լուսաձայնային տպավորիչ էֆեկտներով եւ դերասանական փայլուն կատարումներով: Ձեր թատերախումբը շատ լավ ներկայացավ Գյուլայում: Դա մեծ հաջողություն էր... Ես շարունակելու եմ համագործակցությունը Դրամատիկական թատրոնի հետ եւ վստահ եմ, որ Ձեր ներկայացման հաջողությունը կշարունակվի այլ փառատոններում»:**

**Թատրոնը փառատոնին հրավիրվել էր եւ այդ հրավերը իրականություն է դարձել Երեւանի քաղաքապետարանի ու մշակույթի նախարարության աջակցությամբ, որոնց էլ Արմեն Խանդիկյանը հղեց ողջ թատրոնի շնորհակալական ջերմ խոսքերը: Իսկ նման փառատոների մասնակցելը ե՛ւ պրն Խանդիկյանը, ե՛ւ դերասանները շատ էին կարեւորում, քանզի հենց նման փառատոների ընթացքում է հնարավոր լինում ճանաչել թատերարվեստի բնագավառի նորույթները, շփումների միջոցով նորանոր դեմքեր են հայտնաբերվում: Դրամատիկականը վերջին 6 տարիների ընթացքում 3-րդ անգամ է մասնակցում փառատոնին եւ կրկին արժանանում բարձր գնահատականի:**



**Այնուհետեւ պրն Խանդիկյանը անդրադարձավ թատրոնի առաջիկա ծրագրերին ու տեղեկացրեց, որ թատրոնն այսօր իր խաղացանկում ունի 20 ներկայացում եւ աշնանը չորս նոր առաջնախաղեր կհանձնեն թատերասերների դատին: Դրանք են՝ Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» (վերաբեմադրությունը Արմեն Խանդիկյանի), Քեն Լյուդվիգի «Փնտրվում է տենոր», Լեւոն Մութաֆյանի ու Արմեն Խանդիկյանի «Ջուկը ջրում» եւ Բագիեւի «Վերջին չվերթը» պիեսը (բեմականացնող՝ Հրաչյա Հարությունյան): Առաջիկա ծրագրերի թվում են նաեւ դրսից հայտնի ռեժիսորի այցը, որը թատրոնում կբեմադրի մեկ գործ: «Մեր թատրոնն արդեն 40 տարի փորձում է մնալ իր ձեւավորված դիմագծերի շրջանակում ու մեծ տեղ է տալիս երիտասարդ ստեղծագործողներին: Իսկ նրանց համար մեծ նշանակություն ունի նման շփումները աշխարհի տարբեր թատրոնների ու ռեժիսորների հետ: Այ այստեղ է, որ պետության դերը պետք է լինի աջակցել մշակույթի օջախներին, թատրոններին»:**

**Իսկ նրանք, ովքեր պնդում են, թե թատրոնը մեռնում է, չարաչար սխալվում են: Թատրոնը, նաեւ հայ թատրոնը նոր վերելք է ապրում ու դեռ շատ բարձունքներ կգրավի: Մի քիչ ուշադրություն, պետական հովանավորչություն եւ 2000-ամյա հայ թատրոնը նոր շնչով ու նոր բեմադրություններով կզարմացնի աշխարհին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Մարսելի «Արաքս եւ Մասիս» պարի համույթը Երեւանում

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ նախնական պայմանավորվածության համաձայն, Երեւան են ժամանել Ֆրանսիայի հայ երիտասարդական միության (ԺԱՖ) «Արաքս եւ Մասիս» համույթի հինգ տասնյակ ֆրանսահայ երիտասարդներ: Այցի նպատակն է՝ կատարելագործել հայրենիքում իրենց պարային վարպետությունը: Հայրենի բնությունն ու տեսարժան վայրերը այցելելուց ու ընբոշխնելուց բացի, նրանք վարպետության դասեր են ստանում հայկական պարի լեգենդ Վանուշ Խանամիրյանի, ինչպես նաեւ պարարվեստի թիվ 1 ուսումնարանի պարուսույցներ Աշոտ Ազատյանի եւ Սրբուհի Բաբայանի մոտ: Երեկ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը այցելել է պարարվեստի ուսումնարան եւ ներկա գտնվել մարսելյան պարախմբի փորձերին: Ողջունելով նրանց, նախարարը ոգեւորել եւ հույս է հայտնել, որ հայրենիքի շնչով տոգորված նրանք իրենց պարարվեստով, իրենց ելույթներով կշարունակեն քարոզել հայ արվեստը եւ հիացմունքի կարժանանան հայկական բոլոր համայնքներում: Պարախմբի ղեկավարներն ու համույթի սաները նախարարին խոստացան, որ արտասահմանյան հաջող շրջագայությունից ոգեւորված եւ մասնագիտորեն ավելի հասունացած՝ եկող տարի կմասնակցեն «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնին:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

ՎԱՆԴԱԼՆԵՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ

# Լեւոն Ներսիսյանի կիսանդրու վերադարձը

**Երեւան, հուլիսի 15, շոգ հետմիջօրե:**

**Մաշտոցի պողոտայի եւ Իսահակյան փողոցի հատման անկյունային շենքի պատին կրկին տեղադրվեց Լեւոն Ներսիսյանի բրոնզե կիսանդրին՝ նույն քանդակագործի՝ Արա Շիրազի կատարմամբ: Քարե պատվանդանին արձանագրված է. «Այս տանն ապրել է ոգու եւ ազատության վերջին ասպետը՝ Լեւոն Ներսիսյանը»: Տարիներ առաջ, երբ այդ քանդակը տեղադրվեց Երեւանում, Լեւոն Ներսիսյանին հոգեկից մարդկանց համար առանձնահատուկ բավարարում, ինչ-որ տեղ նաեւ սփոփանք եղավ: Մեր այս աղավաղված ժամանակներում լինում են շատ անբացատրելի բաներ. ինչպես օրինակ՝ Երեւանի կենտրոնական այս վայրից նրա բրոնզե կիսանդրու անհայտացումը:**



**Թափուր պատվանդանի արձանագրությունն ահազանգում, զգուշացնում էր ոգու եւ բարոյականության անկման մասին: Այս ընթացքում, ինչպես վկայում է քանդակագործը, շատ մտավորականներ, նաեւ պետական պաշտոնյաներ ուշադրություն եւ հետաքրքրություն երեւույթի հանդեպ ունեցել են, բայց կիսանդրու առեւանգողները այդպես էլ անհայտ են մնացել: Քանդակագործ Արա Շիրազին թափուր պատվանդանն այս ընթացքում դադար չի տվել, եւ քանի որ գիպսե օրիգինալը կար, նա մտածում էր վերադարձնել Լեւոն Ներսիսյանի կիսանդրին քաղաքին: Վարպետս Վովա Սուքիասյանը ձուլման աշխատանքները նվիրատվություն է արել: «Նա կյանքի վերջին տարիներին նստում էր այս վերին պատշգամբում: Լեւոն Ներսիսյանը մեծ դեր է կատարել հայ մտավորականների կյանքում, սերունդներ են դաստիարակվել իր գաղափարներով: Երջանիկ եմ, որ նորից վերադարձանք այն զգացմանը, որ Լեւոնը մեզ հետ է, մեր քաղաքում», ասում է Արա Շիրազը:**

**«Մեր քաղաքի հոգեւոր կլիման հասել է այն վիճակի, որ թեկուզ չճանաչելով արվեստի գործը, կարող ես հափշտակել. սա անկման վերջին աստիճանն է, եւ այստեղ օտար մարդ չկա, սա մեր ձեռագիրն է: Շատ վատ կլինի, եթե այս երեւույթը դառնա օրինաչափ, որ մի քանդակը 2-3 անգամ դրվի: Էլ չեմ ասում, որ չգիտեն իր մասին: Լեւոն Ներսիսյանը մեր հոգեւոր հայրերից մեկն էր, սերունդներ է դաստիարակել ընդամենը ուրճարանային զրույցներով, էլ չեմ խոսում նրա դասախոսությունների մասին, թե մեր սերնդի համար ինչ նշանակություն ունեցան:**

**Այս երեւույթը ցավալի, ողբերգական եմ համարում: Պատկերացնում եք, ստիպված ենք եղել քանդակի գլխամասը թաքցնելու, միայն նրա համար, որ չտանեն... Ծավալային առումով փոքրացել է, տարածությունը՝ օդը պակասել: Սա, իհարկե, ի վնաս գործի է, բայց այս իրականությունից պաշտպանվել է պետք. այլ ձեւ առայժմ չկա մեր հասարակության մեջ, որովհետեւ ես այն համարում եմ չկայացած», քանդակի ճարտարապետ Լեւոն Իգիթյանի կեցվածքն է սա:**

**Ես էլ նրանցից մեկն էի, ով Լեւոն Ներսիսյանի ընթերցած մի կուրսից չհագեցած, լսարանից լսարան, կուրսից կուրս էի անցնում՝ հին հունական ողբերգությունների ներսիսյանական «էլեգիան» կրկին լսելու:**

**... Նա արտիստիկ էր, այո, բայց եւ գրականությունը մատուցում էր իբրեւ կյանքի արվեստ՝ իր հոգեւոր փորձառությամբ իմաստավորած: Այն տարտամ, կեղծ ժամանակների մեջ նա տալիս էր ամենաթանկը՝ հոգու սնունդը: Այդ մեծ հոգին շռայլորեն, անսակարկ նա բաշխում էր բոլորին՝ ուսանող, ընկեր, մտավորական լիներ, թե պարզ մի մարդ: Եթե գնահատել գիտես՝ վերցրու, վերցրու՝ ամբողջ կյանքիդ համար:**

**Մարդ մշակույթ, որ իր կյանքը ստեղծագործության վերածեց՝ հուզական, ինտելեկտուալ, գեղեցիկ՝ կյանքը բանավոր ապրած այս մեծ մտավորականը, ուսուցիչը: Գրավոր ոչինչ չթողեց նա, մի քանի պատառիկներ գրի՝ ուսանողական նստարանին թաքուն գրառված կամ ձայնագրված մեր կողմից, որ, իր մահից հետո տպագրվեց մի քանի հանդեսներում, մի ֆիլմ, ԵՊՀ բանասիրականում մի լսարան եւ այս բրոնզե կիսանդրին, որ արդեն երկրորդ անգամ տեղադրվեց: Տեղադրվեց հոգու թելադրանքով եւ այն պահանջով, որ «ոգու եւ ազատության վերջին ասպետի» այս պատվանդանը այլեւս թափուր չմնա:**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱԶԳ **Մարզական**

# Աբրահամի առաջին մրցակիցը Թեյլորն է

Նյու Յորքի «Մեդիսոն Սկվեր Գարդեն» մարզասրահում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ամերիկյան SHOWTIME հեռուստաալիքի ղեկավարությունը պաշտոնապես հայտարարել է 6 ուժեղագույն միջինքաշային բռնցքամարտիկների մասնակցությամբ մրցաշար անցկացնելու մասին: Նրանց թվում են IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը, WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոն Միքել Կեսլերը, WBC-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Կառլ Ֆրոխը, միջին քաշում աշխարհի նախկին չեմպիոն Ջերմեն Թեյլորը, ինչպես նաեւ Անդրե Դիրելը եւ Անդրե Ուորդը:



Երեք փուլով անցկացվելիք նախնական հանդիպումների արդյունքներով առավելագույն քանակի միավորներ վաստակած չորս բռնցքամարտիկները պայքարը կշարունակեն կիսաեզրափակիչում՝ վիճարկելով եզրափակիչի ուղեգիրը: Այնպես որ յուրաքանչյուր բռնցքամարտիկ մրցաշարի ընթացքում նվազագույնը 3 մենամարտ կանցկացնի: Յուրաքանչյուր հաղթանակի համար բռնցքամարտիկը 2 միավոր կվաստակի, ոչ-ոքիի դեպքում՝ մեկ միավոր:

Մրցաշարը կսկսվի այս տարվա հոկտեմբերին եւ կավարտվի 2011-ի նոյեմբերին: Արդեն հայտնի են առաջին փուլի զույգերը: Արթուր Աբրահամը մենամարտելու է Ջերմեն Թեյլորի հետ, Ֆրոխի մրցակիցը կլինի Դիրելը, Կեսլերը կպայքարի Ուորդի դեմ: Մենամարտերի անցկացման ժամկետներն ու վայրերը շուտով կհաստատվեն:

Մամուլի ասուլիսին ներկա են գտնվել մրցաշարի մասնակից բռնցքամարտիկները, որոնք իրենց կարծիքն են արտահայտել: Արթուր Աբրահամը հետեւյալն է ասել. «Մշտապես ձգտել եմ աշխարհի ուժեղագույն բռնցքամարտիկների հետ մենամարտել: Երազանքս իրականություն է դառնում: Ցանկանում եմ դառնալ աշխարհի ուժեղագույն բռնցքամարտիկը միջին քաշում»: Աբրահամի մրցակից Թեյլորը եւս լավատեսորեն է տրամադրված. «Կարիերայիս ընթացքում քիչ սխալներ չեմ գործել, ուստի պատրաստվում եմ ամեն ինչ սկսել նորից եւ ամբողջովին նվիրվել բռնցքամարտին»:

Մրցաշարի կազմակերպիչները տեղեկացրել են, որ 2,5 ամիս է պահանջվել զանազան հարցեր կարգավորելու համար: Սկզբում նրանք պայմանավորվել են եվրոպացի բռնցքամարտիկների հետ, իսկ երբ ավարտել են բանակցությունները ամերիկացիների հետ, զբաղվել են մրցակարգի մշակմամբ:

# «Գանձասարի» եվրոպական նորամուտը



Եվրոգավաթների մասնակից հայաստանյան չորս ակումբներից վերջինը մեկնարկի դուրս կգա Կապանի «Գանձասարը»: Այսօր, Երեւանի ժամանակով 23.45-ին «Գանձասարի» ֆուտբոլիստները խաղադաշտ դուրս կգան հոլանդական «Բրեդայի» հետ մրցավեճում: Թիմը Հոլանդիայի Բրեդա քաղաք է ուղեւորվել հուլիսի 14-ի կեսգիշերին:

«Բրեդան» Հոլանդիայի հնագույն ակումբներից է, հիմնադրվել է 1912-ին: 1915-ից հանդես է գալիս Հոլանդիայի առաջնություններում: Թիմին միայն մեկ անգամ՝ հեռավոր 1921-ին է հաջողվել նվաճել երկրի չեմպիոնի տիտղոսը: 4 անգամ «Բրեդան» արժանացել է արծաթե, 2 անգամ՝ բրոնզե մեդալների: 1973-ին թիմը նվաճել է երկրի գավաթը: Դա «Բրեդայի» վերջին հաջողությունն էր: Վերջին տասնամյակներում «Բրեդան» առանձնակի հաջողություններ չի ունեցել, միջին դիրքեր է գրավել Հոլանդիայի առաջնություններում: Նախորդ առաջնությունում թիմը զբաղեցրել է 8-րդ տեղը:

«Բրեդայի» ֆուտբոլիստներից հայ ֆուտբոլասերներին առավել հայտնի է Ֆինլանդիայի հավաքականի 34-ամյա հարձակվող Յոնաս Կոլկան, որը մի քանի անգամ խաղացել է Հայաստանի հավաքականի դեմ: Պատրիկ Մտիլգան Դանիայի հավաքականի թեկնածու է: 33-ամյա Յաբա Քեհերն էլ ժամանակին հանդես է եկել Հունգարիայի հավաքականում: Թիմի առաջատարը Գանայի հավաքականի հարձակվող Մեթյու Ամոան է, որը վերջին երկու առաջնություններում 25 գոլ է խփել:

«Բրեդան» եվրոգավաթների մասնակցության զգալի փորձ չունի: Թիմը 4-րդ անգամ է մեկնարկի դուրս գալիս: Առայժմ միայն մեկ անգամ՝ 1967/68-ի գավաթակիրների գավաթի խաղարկությունում է թիմին հաջողվել հաղթահարել առաջին փուլի արգելքը՝ երկու հանդիպումներում հաղթելով Մալթայի «Ֆլորիանային» (2-1, 1-0): Վերջին անգամ «Բրեդան» եվրոգավաթներին մասնակցել է 2003/2004-ի ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում՝ զիջելով անգլիական «Նյուքասլին» (0-5, 0-1):

«Գանձասարն» ընթացիկ առաջնությունը շատ անհաջող սկսեց՝ կրելով 5 անընդմեջ պարտություն: Սակայն աստիճանաբար կարգավորեցին մրցաշարային իրավիճակը, երբ թիմի ղեկը ստանձնեց Սլավա Գաբրիելյանը: Եվրոգավաթների շեմին թիմը որոշ համալրում է ստացել: «Լեռնային Արցախից» հրավիրվել է դարպասապահ Արթուր Ավագյանը, «Կիլիկիայից»՝ Անդրանիկ Սարգսյանը: Թիմում ընդգրկվել է նաեւ Զազա Սախոկիան, որն անցած տարի հանդես էր գալիս «Միկայում»: Թիմի մարզիչները փորձարկում էին նաեւ վրացի եւս մի քանի ֆուտբոլիստների: Ամեն դեպքում դժվար է գուշակել, թե ինչպիսի կազմով խաղադաշտ դուրս կգա «Գանձասարը»:

# Գոհարյանը խաղին չմասնակցեց

Չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում բացի «Փյունիկ»-«Դինամո» Զագրեբ մրցախաղից, կայացավ եւս չորս հանդիպում: Հաջող մեկնարկեց Բելառուսի ԲԱՏԷ-ն, որն անցած տարի մեծ անակնկալ մատուցեց՝ հանդես գալով չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Բելառուսի չեմպիոնը հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց «Մակեդոնիային» եւ գործնականում լուծեց հաջորդ փուլ մտնելու խնդիրը: Ինչպես հայտնի է, նոր մրցաշրջանում ԲԱՏԷ-ի կազմում է ընդգրկվել Հայաստանի երիտասարդական հավաքականի հարձակվող Հովհաննես Գոհարյանը: Սակայն նա հանդիպմանը չմասնակցեց:

Ադրբեջանի չեմպիոն «Բաքուն» հյուրընկալվելիս ոչ-ոքի (2-2) խաղաց Լիտվայի «Էկրանասի» հետ: Հաջորդ փուլի ուղեգրի հարցը գործնականում լուծեցին Սերբիայի «Պարտիզանի» ֆուտբոլիստները, որոնք 4 անպատասխան գնդակ ուղարկեցին Ուելսի «Ռիլի» դարպասը: Կիպրոսի «Ապոելն» էլ մրցակցի դաշտում 2-0 հաշվով պարտության մատնեց Ֆարերների «Ստրեյմնյուրին»:

ՇԱԽՄԱՏ

## Պարտություն հաջող մեկնարկից հետո

Հունաստանի Իկարիա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 168 մասնակիցների թվում է Նելլի Աղինյանը: 5 տուրից հետո նա վաստակել է 3,5 միավոր եւ ընթանում է 24-րդ տեղում: Աղինյանը հիանալի մեկնարկեց՝ հաջորդաբար հաղթելով հույն Լեոնիդաս Բարբագիանիսին, ռուսաստանցի Օլգա Վրուբլյովսկայային եւ ֆրանսիացի Միխայիլ Մասաակիսին: 4-րդ տուրում հայ շախմատիստուհին առաջին միավորը կորցրեց՝ ոչ-ոքի խաղալով չեռնոգորցի Դուշան Լեկիչի հետ: Իսկ 5-րդ տուրում Աղինյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Ուզբեկստանի ներկայացուցիչ Սերգեյ Զագրեբելնիին:

Առաջատարը լեհ շախմատիստ Ռոբերտ Կեմպինսկին է, որը հարյուր տոկոսանոց արդյունք ունի: Նրան կես միավոր են զիջում Ռոբերտ Մարկոսը, Սերգեյ Զագրեբելնին, Ալեքսանդր Միստան եւ Հերալդ Գրոյթցը:

## Միեր Հովհաննիսյանը Բելգիայի չեմպիոն

Բելգիայում բնակվող միջազգային վարպետ Միեր Հովհաննիսյանը նվաճեց այդ երկրի շախմատի չեմպիոնի տիտղոսը: Նա 9 հնարավորից վաստակեց 6,5 միավոր: Նույնպիսի արդյունքի էր հասել նաեւ Ալեքսանդր Տկեուբաձեն: Չեմպիոնին որոշելու համար նրանց միջեւ արագ շախմատի կանոններով մրցախաղ անցկացվեց, որում հաջողությունն ուղեկցեց հայ շախմատիստին:

## Բաբուջյանը միանձնյա առաջատարն է

«Սեւանա լիճ» շախմատի մրցաշարի 5-րդ տուրում ուշադրության կենտրոնում Լեւոն Բաբուջյանի եւ Սամվել Տեր-Սահակյանի մրցավեճն էր, որն ավարտվեց ոչ-ոքի: Բաբուջյանը 3,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: 3-ական միավորով առաջատարին հետապնդում են Արման Փաշիկյանը, Ավետիք Գրիգորյանը եւ Չժաո Լին: Գրիգորյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Սերգեյ Ժիգալկոյին, որն առաջին անգամ ճաշակեց հաղթանակի քաղցրությունը: Չժաո Լին հաղթեց Ռինաս Զումաբաեւին, իսկ Փաշիկյանը հաշտություն կնքեց Ֆերենց Բերկեշի հետ:

Անհաջող է հանդես գալիս գրոսմայստեր Տիգրան Քոթանջյանը, որը պարտվեց Իգոր Լիսիջին: Քոթանջյանը 1,5 միավորով նախավերջին տեղում է, իսկ աղյուսակը 1 միավորով եզրափակում է Ռինաս Զումաբաեւը: 2,5-ական միավոր ունեն Տեր-Սահակյանը, Ժիգալկոն, Լիսիջն ու Բերկեշը:

## Նակամուրայի դիրքերն անսասան են

Սան Սեբաստիանի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Սերգեյ Մովսիսյանը ոչ-ոքի խաղաց Ռուստամ Կասիմջանովի հետ եւ վաստակելով 3,5 միավոր, իր մրցակցի ու Վաշյե-Լագրավի հետ բաժանում է 5-7-րդ տեղերը: Հաշտություն կնքեցին նաեւ Նակամուրան ու Գրանդան, Սան Սեգունդոն ու Սվիդլերը: Պոնոմարյովը հաղթեց Վաշյե-Լագրավին, Վալյեխոն առավելության հասավ Կարպովի նկատմամբ:

Աղյուսակը 5,5 միավորով շարունակում է գլխավորել Հիկարու Նակամուրան: Նրան կես միավոր է զիջում Ռուսլան Պոնոմարյովը: Սվիդլերն ունի 4,5, Վալյեխոն՝ 4 միավոր: Աղյուսակը 1 միավորով եզրափակում է Կարպովը: 8-րդ տուրում Մովսիսյանը մրցելու է առաջատարի՝ Նակամուրայի հետ: Հայ շախմատիստը կխաղա սեւ խաղաքարերով:

## «Մանչեսթր Սիթին» սպասում է Տեւեսին

«Մանչեսթր Սիթիի» ղեկավարությունը հուսով էր, որ մինչեւ Հարավային Ամերիկա կատարվելիք մրցաշրջագայությունը թիմում կընդգրկի «Մանչեսթր Յունայթեդի» արգենտինացի հարձակվող Կառլոս Տեւեսին: Վերջինիս ծառայություններից հրաժարվել էր թիմի գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը՝ տեսնելով, որ Տեւեսն առանձնակի ցանկություն չունի խաղալու ակումբում: Ֆուտբոլիստը հաջողությամբ անցավ բժշկական քննությունը եւ ընդգրկվեց «Մանչեսթր Սիթիում»՝ հնգամյա պայմանագիր կնքելով ակումբի հետ: Նա շաբաթական 150 հազար ֆունտ ստեռլինգ աշխատավարձ կստանա: «Մանչեսթր Յունայթեդում» նա 90 հազար էր ստանում եւ պահանջում էր աշխատավարձը բարձրացնել մինչեւ 100 հազար ֆունտ ստեռլինգ: Տեւեսը դարձավ թիմի 3-րդ նորեկը Ռոկե Սանտա Կրուզից եւ Գարեթ Բերիից հետո:




## Գերազանցեցին համաշխարհային ռեկորդները

Լողի ԱՄՆ-ի առաջնությունն աչքի է ընկնում համաշխարհային ռեկորդներով: Պեկինի օլիմպիադայի հերոսներից մեկը՝ Մայքլ Ֆելպսը գերազանցեց 100 մ բատերֆլայ լողանքի աշխարհի ռեկորդը՝ մրցատարածությունը հաղթահարելով 50,22 վրկ-ում: Դա 0,18 վրկ-ով գերազանցում է 2005-ին Մոնրեալում ամերիկացի մեկ այլ լողորդի՝ Յան Կրոկերի նախկին լավագույն արդյունքը: Այժմ Ֆելպսին են պատկանում աշխարհի հինգ ռեկորդներ 200 եւ 400 մետր համալիր լողում, 100 եւ 200 մետր բատերֆլայ եւ 200 մետր ազատ լողանքերում:

Պեկինի օլիմպիադայում Ֆելպսը 8 ոսկե մեդալ էր նվաճել՝ գերազանցելով 1972-ին Մայքլ Սպիցի ռեկորդային ցուցանիշը: Ընդհանուր առմամբ նա օլիմպիական 14 ոսկե մեդալ է նվաճել, իսկ աշխարհի առաջնություններում 17 անգամ է հաղթող ճանաչվել:

Համաշխարհային 2 ռեկորդ սահմանեց Աարոն Պիրսոլը: 100 մ թիկնալողում նա ցույց տվեց 51,94 վրկ արդյունք: Նախկին ռեկորդը պատկանում էր իսպանացի Ֆաբերին (52,38 վրկ): Երկրորդ ռեկորդը Պիրսոլը սահմանեց 200 մ թիկնալողում (1 րոպե 53,08 վրկ)՝ գերազանցելով իր հայրենակից Ռայան Լոխտիի Պեկինում ցույց տված արդյունքը: Պիրսոլն օլիմպիական հնգակի, աշխարհի ութակի չեմպիոն է:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 7/15/2009 10:45 PM Page 1



# Ուկրաինան ողջունում է «Նաբուկո»-ի մեկնարկը եւ ցանկանում է միանալ դրան

ԿԻԵՎ, 15 ՅՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ուկրաինան ողջունում է «Նաբուկո» նախագծի իրացման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը եւ ցանկանում է միանալ դրան: Այդ մասին, ինչպես հաղորդել է ՌԻԱ «Նովոստի»-ն, հայտարարել է Ուկրաինայի նախագահի քարտուղարության փոխղեկավար Անդրեյ Գոնչարուկը:

«Ուկրաինան որպես կասպիական-սեւծովյան-բալթյան էներգետիկական տարածության ստեղծման նախաձեռնող պետություն, որի հայեցակարգի հիմքում ընկած է էներգամատակարարումների ուղիների եւ աղբյուրների բազմազանեցման սկզբունքը եւ աջակցությունը էներգակիրների ազատ տարանցմանը, դրական է գնահատում «Նաբուկո» գազամուղի շինարարության վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի ստորագրումը: Գազի սպառման ծավալների աճի պայմաններում «Նաբուկո»-ն կբարելավի կասպիական տարածաշրջանի գազի ռեսուրսներից եվրոպական երկրների, այդ թվում՝ Ուկրաինայի մատակարարումը: Ուստի Ուկրաինան հայտարարում է «Նաբուկո» նախագծի իրացմանը մասնակցելու իր շահագրգռության մասին դրա բոլոր փուլերում՝ նախագծումից մինչեւ շահագործում»,- ասել է Գոնչարուկը:




Թուրքիայի, Ավստրիայի եւ Հունգարիայի կառավարությունների ղեկավարները եւ Բուլղարիայի եւ Ռումինիայի էներգետիկական ընկերությունների ղեկավարները հուլիսի 13-ին միջկառավարական համաձայնագիր են ստորագրել «Նաբուկո» նախագծի վերաբերյալ: Ստորագրման արարողությունը կայացել է Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում, ուր ժամանել էին օտարերկրյա պետությունների եւ Եվրոմիության 30-ից ավելի ներկայացուցիչներ:

«Նաբուկո» նախագիծը գնահատվում է 7,9 մլրդ դոլար եւ եվրոպական երկրներ բնական գազի փոխադրում է ենթադրում Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի եւ Ավստրիայի տարածքով: Այն կդառնա արդեն կառուցված Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շարունակությունը եւ հաշվարկված է տարեկան 31 մլրդ խորանարդ մետր գազի փոխադրման համար: Սկզբնական փուլում խողովակաշարով ծրագրվում է պոմպամղել մոտ 15 մլրդ խորանարդ մետր գազ: Թուրքիայի տարածքով է անցնելու գազամուղի երկու երրորդը, կամ 3,3 հազար կիլոմետրից մոտ 2 հազարը: Գազամուղի շինարարությունը ծրագրվում է սկսել 2010 թվականին, իսկ դրանով գազի մատակարարումը՝ 2014 թվականին:

Կոնսորցիումի մասնակիցներն են Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի եւ Գերմանիայի էներգետիկական ընկերությունները:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմինը տեղեկացնում է, որ հուլիսի 16-ին ՀՀ ԱԳՆ-ի առջեւ նախատեսված բողոքի ցույցը տեղի չի ունենա՝ Թեհրան-Երեւան ինքնաթիռի վթարի պատճառով:

Հուլիսի 16-ին՝ ժամը 13.00-ին, «Ուրբաթ» ակումբում ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը հանդես կգա պարզաբանումներով:

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐ

Այժմ ֆինանսական շուկայում Ձեր իրավունքները պաշտպանված են:
Առաջին անգամ Հայաստանում գործում է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը, որը կոչված է ԱՐԱԳ, ԱՆՎՃԱՐ եւ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ լուծելու սպառողների եւ ֆինանսական կազմակերպությունների միջեւ ծագած վեճերը:
Ֆինանսական կազմակերպության հանդեպ ծագած Ձեր պահանջի անվճար եւ արագ քննությունը մեր աշխատանքն է:

Հեռ.՝ 58-23-21, 58-23-22
Էլ. հասցե՝ www.fsm.am, info@fsm.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐ ՁԵՌՔՈՒՄ

ԱՆՎՃԱՐ Java-ծրագիր բջջային հեռախոսների համար
✓փոքր ծավալ (200 կԲ)
✓ուղղակիորեն զանգելու հնարավորություն
✓աշխատում է առանց Ինտերնետի
Բեռնեք ծրագիրը **www.spyur.am/mobile** հասցեից
*«Սփյուռ» տեղեկատվական կենտրոն*
*Հեռ.՝ 562635*



### Վաճառվում է

ավտոլվացման բիզնես 60 քմ եւ նկուղային՝ 50 քմ տարածքով, ընդհանուրը՝ 110 քմ: Տարածքը կարելի է օգտագործել տարբեր բիզնեսի համար: Հասցեն՝ Ավետիսյան 67/6 (Ավետիսյան-Փափազյան խաչմերուկի հարեւանությամբ): ***Հեռ.՝ (091) 21 88 72:***

fruitfull armenia 5th THE CONTEST

FRUITFULLTALENTARMENIA
YOUNG KNOWLEDGE BUILDING THE FUTURE
ՖՐՈՒԹՖՈՒԼԱՐՄԵՆԻԱՏԱՂԱՆԴ
ԱՊԱԳԱ ԿԵՐՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

**ՖՐՈՒԹՖՈՒԼ ԱՐՄԵՆԻԱՆ** հպարտորեն հանդես է գալիս իր հինգերորդ ամենամյա նախաձեռնությամբ: Այս տարի մենք կազմակերպել ենք մրցույթ՝ **ՖՐՈՒԹՖՈՒԼ ԱՐՄԵՆԻԱ ՄՐՑՈՒՅԹԸ**, որպես նախաձեռնություն՝ խրախուսելու և նպաստելու **նորարական առաջարկների** ներկայացմանը և **աշխարհի** տարբեր անկյուններից **երիտասարդ հայ տաղանդների** բացահայտմանը:

Մենք ակնկալում ենք Ձեր մասնակցությունը և հույսով ենք, որ մասը կկազմեք գիտական ուսումնասիրության այս գործընթացի՝ աշխատանքային մի ուղու, որը կամփոփվի 2009 թվականի հոկտեմբերին, երբ մենք **ՖՐՈՒԹՖՈՒԼ ԱՐՄԵՆԻԱ V-ի** շրջանակներում հաճույքով կներկայացնենք **Մրցանակաբաշխությունը:**

**ՖՐՈՒԹՖՈՒԼ ԱՐՄԵՆԻԱ ՏԱՂԱՆԴՆԵՐԻՆ** հայտնաբերելու և բացահայտելու համար մենք փնտրում ենք **հայ երիտասարդներ** տարբեր բնագավառներից՝ այդ թվում նաև համալսարաններից, գիտահետազոտական կենտրոններից, ագարակներից, փոքր ու միջին ձեռնարկություններից, մարկետինգի ոլորտից. երիտասարդների, ովքեր ցանկանում են արտահայտել իրենց ակնկալիքներն ու գիտելիքները և մասնավորապես ներկայացնել վերը նշված այս կամ այն ոլորտի հետ առնչվող **հեղափոխական նախագծեր՝ Հայաստանի Հանրապետության համար** ներգրավելով նոր մեթոդներ, գաղափարներ և ձևաչափեր:

ՄԱՍՆԱԿՑԵՔ
ԵՎ ԴԱՐՁԵՔ ՄԱՍԸ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
ՖՐՈՒԹՖՈՒԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2009

Ավելի քան **15.000.000**
ՀՀ դրամ արժողությամբ մրցանակներ

CONVERSE BANK | DUTY FREE ZVARTNOTS

- Եթե հայ եք
- Եթե 18-30 տարեկան եք
- Խոսում եք հայերեն և անգլերեն, գրում եք այդ լեզուներից որևէ մեկով

Դիմագրավեք մարտահրավերին, **մասնակցեք** fruitfull armenia 5 THE CONTEST

ԹԵՄԱՆԵՐ
- Գյուղատնտեսություն և Գյուղարդյունաբերական Արտադրություն
- Առևտուր և Մարկետինգ
- Ֆինանսներ
- Ենթակառուցվածք

ԳՐԱՆՑՎԵՔ ՀԻՄԱ և ներկայացրեք աշխատանքները մինչև 2009թ սեպտեմբերի 5-ը մրցույթի պայմաններին ու կանոններին ծանոթացեք մեր կայքում www.fafarmenia.org

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: